



Հունիսի 30, 2021թ.

Կարծիք

Գործարար Խաչատուր Սուքիասյանն ընդդեմ մի շարք լրատվամիջոցների դատական գործերի կապակցությամբ

Գործի հանգամանքները

2021թ. ապրիլի 19-ին գործարար Խաչատուր Սուքիասյանը ներկայացրել է դատական հայց ընդդեմ <https://yerevan.today> լրատվական կայքի՝ վերջինիս կողմից հրատարակված հետևյալ նյութի համար.

Զգուշացեք. Խաչատուր Սուքիասյանի բենզինը փչացնում է մեքենաները. Դեժավյու:

Վերջերս հայտնի օլիգարխ Խաչատուր Սուքիասյանը (մականունը Գոգո), որը փաստացի հանդիսանում է Նիկոլ Փաշինյանի ընտանիքի օլիգարխը, ձեռք է բերել «Ran Oil» ընկերությունը: Թվում էր, թե չմեծացող շուկայի պայմաններում, նա լուրջ մրցակցություն կստեղծի և դաշտում գործող այլ ընկերություններից հաճախորդներ կփախցնի, այդպիսով հարստացնելով իր և Փաշինյանի անկուշտ ընտանիքների ախորժակը: Սակայն, բենզինի և դիզելային շուկայում յուրահատուկ պարադոքսալ իրավիճակ է ստեղծվել: Իսկ իրականությունը և պարադոքսը կայանում է նրանում, որ այս ընթացքում, գրեթե բոլոր մրցակիցների մոտ, հաճախորդների աննախադեպ աճ է գրանցվել (Ֆլեշ, CPS, Max oil): Խնդիրը նրանում է, որ Սուքիասյան Գոգոն, ընկերությանը իր տիրապետության տակ առնելուց հետո, սկսել է ներկրել չափազանց ցածր գնով և անորակ վառելիք, ինչի հետևանքով հաճախորդների մեքենաների շարժիչները կարճ ժամանակ անց շարքից դուրս են գալիս:

Այդ ինֆորմացիան արագ տարածվում է վարորդների շրջանում և նրանք համատարած հրաժարվում են սպասարկել «Ran Oil» բենզալցակայաններից: Սուրբիասյանին և Փաշինյանին մեկ է, որ վարորդների մեքենաները շարքից դուրս են գալիս, իրենք իրենց եկամուտն են արագորեն հավաքում, որտեղից որքան կարող են, քանի Նիկոլը վարչապետ է:

Հայցվորը նշել է, որ հետևյալ արտահայտությունները զրպարտություն են.

«(...) Խաչատուր Սուրբիասյանը, Ran Oil ընկերությունն իր տիրապետության տակ առնելուց հետո, սկսել է ներկրել չափազանց ցածր գնով և անորակ վառելիք, ինչի հետևանքով հաճախորդների մեքենաների շարժիչները կարճ ժամանակ անց շարքից դուրս են գալիս (...):»:

«(...) Վերջերս հայտնի օլիգարխ Խաչատուր Սուրբիասյանը (մականունը Գոգո), որը փաստացի հանդիսանում է Նիկոլ Փաշինյանի ընտանիքի օլիգարխը, ձեռք է բերել Ran Oil ընկերությունը (...):»:

-«(...) Սուրբիասյանին և Փաշինյանին մեկ է, որ վարորդների մեքենաները շարքից դուրս են գալիս, իրենք իրենց եկամուտն են արագորեն հավաքում, որտեղից որքան կարող են, քանի Նիկոլը վարչապետ է(...):»:

Հայցվորը դատարանից պահանջել է լրատվամիջոցին պարտավորեցնել զրպարտություն համարվող փաստացի տվյալները հրապարակայնորեն հերքել և վճարել փոխհատուցում:

Խաչատուր Սուրբիասյանը ներկայացրել է նույնաբովանդակ հայցեր նաև news.am, asekose.am, armday.am, yerkir.am, 168.am և pastinfo.am լրատվամիջոցների դեմ՝ պահանջելով պարտավորեցնել հրապարակային ներողություն խնդրել, հրապարակել դատարանի վճիռը, հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները և վճարել փոխհատուցում: Ընդ որում, armday.am լրատվական կայքի դեմ ներկայացված հայցի շրջանակներում դատարանը նաև բավարարել է հայցվորի միջնորդությունը և հայցագնի՝ 3,000,000 դրամի չափով արգելանք է կիրառել այդ ՁԼՄ-ին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա: Մնացած գործերով դատարանները արգելանքի մասին նույնանման միջնորդությունները մերժել են:

Ի հավելումն, նույն օրը «Մեգա Թրենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը նույնաբովանդակ հայցեր է ներկայացրել ընդդեմ news.am, armday.am, asekose.am, 168.am և yerevan.today.am կայքերի դեմ՝ պնդելով, որ վիճահարույց հոդվածները զրպարտել են ընկերության գործարար համբավը: Այս հայցերի

կապակցությամբ ներկայացված արգելանքի վերաբերյալ դիմումները դատարանները նույնպես մերժել են:

Եզրակացություն

Վիճահարույց նյութը, որը yerevan.today-ից արտատպել են վերոհիշյալ կայքերը, վերաբերում է հանրային հետաքրքրություն ներկայացնող թեմայի՝ ավտոմեքենաների համար ներկրվող վառելիքի որակին, որն արդեն տևական ժամանակ է, ինչ քննարկման առարկա է հասարակության որոշ շրջանակների, հատկապես վարորդների, ավտոմեքենաների սեփականատերերի մոտ: Հրապարկումը քննադատորեն դիտարկում է ոչ միայն գործարար Խաչատուր Սուքիասյանին պատկանող «Ռան Օյլ» ընկերության կողմից վաճառվող ցածրորակ վառելիքի, այլ նաև այդ ընկերության հետ փոխկապակցված անձի հանրային գործունեության խնդիրը, որի շրջանակում լրագրողը նաև ակնարկել է երկրի քաղաքական դեկավարության հետ նրա սերտ կապերի մասին: Նշված հանգամանքները բարձրացնում են հողվածի հանրային նշանակությունը: Թեև անձի կամ կազմակերպության գործարար համբավը նույնպես ենթակա է պաշտպանության ոտնձգություններից, այդ հանգամանքը չի կարող գերակայել հանրային ծառայության որակի վերաբերյալ առկա մտահոգությունների առնչությամբ տեղեկություններ ու գաղափարներ տարածելու լրատվամիջոցների ազատության իրավունքին¹:

Այդուհանդերձ, նյութի բովանդակությունը չի ներկայացվել փաստերի ու տվյալների հիման վրա: Օրինակ, հեղինակը չի ներկայացրել, թե ինչու էր գտնում, որ ընկերության կողմից ներմուծվող բենզինը «ցածր գնով ու անորակ վառելիք է», որ «մեքենաների շարժիչները կարճ ժամանակ անց շարքից դուրս են գալիս»: Նման եզրահանգումները չեն հիմնավորվել փաստերով, տվյալներով, տեղեկություններով:

Մասնագիտական սկզբունքների համաձայն, բարեխիղճ լրագրողը պարտավոր է մինչև նյութի հրապարակումը ստուգել տեղեկությունների հավաստիությունը, սահմանազատել փաստերը, տեղեկությունները և տվյալները կարծիքներից, վերլուծություններից ու մտահանգումներից: Խնդրո առարկա նյութում այդպիսի սահմանազատում չկա: Արդյունքում, ամբողջությամբ հիմնված լինելով հեղինակի վերացական պատկերացումների ու ենթադրությունների վրա՝ նյութը կարող է վնաս հասցնել գործարար համբավին և անձի արժանապատվությանը: Նման մոտեցումը չի

¹ Տե՛ս, նման հանգամանքներում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը՝ **BERGENS TIDENDE-ն ու այլոք ընդդեմ Նորվեգիայի, թիվ 26132/95, 02/05/2000:**

համապատասխանում ճշգրիտ և անկողմնակալ տեղեկություններ հրապարակելու մասնագիտական պահանջին:

Նկատենք, որ հողվածի հրապարակման պահին Խաչատուր Սուքիասյանը դեռ չէր ներկայացրել քաղաքական գործունեությամբ զբաղվելու հանրային հայտ, մինչդեռ ավելի ուշ նա ընտրվել է Ազգային ժողովի իշխող կուսակցության խմբակցության պատգամավոր, և նոր իրավիճակում դատավարությունները կարող են դիտարկվել այլ՝ իշխանության ներկայացուցչի կողմից լրատվամիջոցի նկատմամբ ճնշում գործադրելու համատեքստում: Ուստի Խորհուրդը հորդորում է պատգամավորին հետ վերցնել իր հայցերը և տեղեկատվական վեճերը լուծելու համար օգտվել արտադատական մեխանիզմներով՝ փորձագիտական կարծիք տրամադրելու խնդրանքով դիմելով Հայաստանի ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին, ինչպես նաև՝ կիրառելով հերքման կամ պատասխանի իրավունքը:

Խորհուրդը նաև առաջարկում է Հայաստանի ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին քննարկման առարկա դարձնել խնդրո առարկա տեղեկատվական վեճը՝ լրագրողական էթիկայի տեսանկյունից և կարծիք հրապարակել այդ առնչությամբ:

Տեղեկատվական վեճերի խորհուրդ

Շուշան Դոյրոյան (Խորհրդի քարտուղար) - Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ

Արա Ղազարյան - «Արա Ղազարյան» իրավաբանական գրասենյակի տնօրեն

Բորիս Նավասարդյան - Երևանի մամուլի ակումբի նախագահ

Արամ Աբրահամյան - «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր

Աշոտ Մելիքյան - Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Օլգա Սաֆարյան - Փաստաբան

Դավիթ Սանդուխչյան - Փաստաբան